

ՄԱՅՑԵՆԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՆԿԱՅՈՂԱԹԻՐԻՆԵՐ ԵՎ ԴՈՒՆԻ ՊԱՏՄԱԹԻՐԻՆԵՐ

ՎԵՐՔԻՐԵՐԵՐ

(Հարմարեցնող — Բ. Բ.)

Բ.

Մի անշարժ Ե. յեղանակի կորուստը բազմաթիւ ենթագրութիւններէ առիթ է տալիս, երբ խնդրի պատմական կողմնէն դիտուած Եւսի եւ առաջ այն հաստատուող մի անկապ գործը չէր եւ պատմութիւն էր Գ. յեղանակի շարունակութիւնն եւ արդի Ե. յեղանակի նախորդող դեպքերը, Ուրեմն նրա հետքերը պահպանուած պիտի լինէին հետեւեալ յեղանակներէ մէջ: Բացի այն, որ այդպէս չէ, այն հաստատուող, որ միշտանաւոր ուրոյն յեղանակի մէջ պատմութիւնը արժանի, պատերազմի նկարագիրն էր, առնչուածութեան մէջ կը լինէր զազարի երկրորդ գրութիւնի հետ, որ կամ հաստատուած կամ հերքուած եւ կամ լրացուած է Եղիշէին: Եղիշէն չէր ընդունել այն յարձակման յիշատակութիւնը վասակի դատապարտութեան նկարագրից, որ պահէ եւ թէ զազար եւ թէ Եղիշէ, բարեւ մանրամասն նկարագիր վարդանի եւ վասակի կատարած ու չկատարած խնայողականութեան եւ ուխտազանցութեան Ի վերջոյ, Եղիշէն որ խնամք ունէր ժողովուրդատերազանութեան ընկածներէ թիւն եւ այն գուժարեւնի բերգերից ինքնազանցութեան 1036 մանրակրկիտ հաշուով, չէր զանազ գէթ մի հանգստեան աղբիւր միջնաշարու արեւելեայ յարձակման մէջ ընկածներէ յիշատակին: Այս հարցերն ու խոհերն չէ թէ խնդիրը սպառնալու պատահի ունին, այլ վկայելու, որ մատենագրական եւ պատմական ընդարձակ հողի վրայ պատշաճ է Ե. յեղանակի խնդիրն քննել եւ լուծել: Իսկ այն մի քանի դիտողութիւնները, որոնք իմ յարգելի ուսուցչի մէջ կասկած են յարուցելու մի ամբողջ յեղանակի կորստեան մասին, գեղեցիկ բաւական չեն խնդիրն այս կամ այն վիճակի մէջ դնելու, եւ իսկոյն կը ասանենք, որ այն ձեռագրական դիտողութիւններն այլեւայլ նշանակութիւն եւ մեկնութիւն ունին:

Եղիշէի ամենահին ձեռագիրն Էլմիսանի մատենագրարանում է ըստ Կարինեանի ցուցակի թիւ 1645 (անտիպ ցուցակ 1687), գրած 1174 թուին: Այդ հնութեամբ յայտնի է բանասիրութեան մէջ 1823 թ. Պոլսի հրատարակութեան նախագաղափար ձեռագիրը, որ Հայոց Ոճ-ձ թուից է: — Այս երկու ձեռագիրները,

Համարեա 6 տարիով իրարից հեռու, երկու տարբեր պատկեր են ներկայացնում. Ե. յեղանակի վերնագիրն եւ Ե, յեղանակի իրեն ուրոյն բաժանուող Էլմիսանի ձեռագիրն չունի, իսկ Պոլսոյ Պատրիարքի ձեռագիրն ունի. այդ հանգամանքը նշանաւոր է, որովհետեւ Եղիշէի մնացած բոլոր ձեռագիրներն այդ թուից յետոյ են բացի մէկից եւ բոլորը Հայնակցում են Էլմիսանի այն ձեռագրին. այսինքն Էլմիսանի ձեռագիրներէց Nr 1645 (անտիպ ցուցակ 1687), 1615 [1657], 1625 [1667], 1381 [7], Nr. ? (անտիպ ցուցակ 2463), Nr. ? [611], Nr. ? [1688] — բոլորը 1174 թուին ընդօրինակութեան պատկերն ունին. այդպէս են նաեւ հրատարակութեան ենթագրութեան բոլոր ձեռագիրները բացառութեամբ երկուսի. իսկ Էլմիսանի մնացած ձեռագիրներն թէպէտ ունին Ե. յեղանակ, բայց այն Զ. վերնագրով է եւ վեցերորդ յեղանակի ծաւալով, իսկ վեցերորդ բացակայում է նոյալ մէջ: Սակայն Պոլսոյ Պատրիարքի ձեռագիրն միակը չէ իւր տեսակի մէջ. ամենահնագոյնն Անձեւայեանց օրինակն է, որ տպագրած է 1861 թ. Ի Թեոդոսիա. սա այլեւայլ առաւելութիւններէ շարքում ունի ճիշդ այն պատկերը, ինչ որ ունի նաեւ Պոլսոյ Պատրիարքի ձեռագիրը, թէ հինգերորդ վերնագիրն եւ թէ յեղանակն պահուած են նոյալ մէջ ուրոյն դիրքով: Ունիք եւ մի ուրիշ ցուցում. Եղիշէի անդանիկ հրատարակութեան մէջ, որ մեզ անոթով չէ, «տեղ մ'աւ անդանիկութիւն չկայ թէ հինգերորդ գլուխն իւր ձեռագիրն մէջ կը պակասէր եւ թէ հրատարակիչը վեցերորդին մէկ մասն հինգերորդ գլուխ հաշուած ըլլայ»: Է. Յ. Ս. Տաշեանի այս վկայութիւնը հիմք ընդունելով՝ կ'ունենանք ուրեմն միմիայն երեք ձեռագիր, որոնց մէջ Ե. յեղանակն եւ իւր խորագիրն անխախտ պահուած են ուրոյն դիրքով, հակառակ այն բոլոր ձեռագիրներին, որոնք երբեմնից բանասիրութեան հանգիպած են:

Վերջոյնեալ երկու թիւն անկախ չէ այլեւայլ երկու թիւններէց, որոնք միեւնոյն ծագման են նայում. այսպէս տեսնում ենք որ Գ. յեղանակից սկսած վերնագիրներն տարբեր խմբագրութիւնն ունին Յեղանակների ճակատին քան Յառաջընթանի մէջ. այսպէս Ե. յեղանակութիւն

[1] այս նշաններէ մէջ անտիպ ցուցակի համարներն են, իսկ նոյնանոց գուրը տպագրած ցուցակի: Այս տարի լրտեսում է տառնամակն այն օրից, երբ վերին տեղադրութեան խմբագրող ձեռնարկուց Էլմիսանի ձեռագրերի կանոնաւոր մի ցուցակագրութեան աշխատանքը, բայց այն գեղեցիկ հրատարակուեց միշտէլ այսօր:

ովանց բաժանելը ի նմին ուխտէ ղ դարձել է Դ. յեղանակի սկզբում « վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց եւ անորեն ընկերաց իւրոց » նոյնպէս « ընդգիմանան Տայոց պատերազմաւ » փոխուել է « կրկին անգամ ընդդէմ կալ Տայոց պատերազմաւ թագաւորին պարսից » նաեւ « յերկարամիտ խաղութեան » խմբագրուած է « յորում նկարագրի դարձեալ առաքինութիւն Տայոց եւ չարագոյն եւս երեւի անորենութիւնն Վասակայ : Բաց ի վերնագրիներէրց, կայ աւելի նշանաւոր տարածայնութիւն Եսառալաւանի եւ պատմութեան մէջ : մեր խաջը յեղանակներէ թուի մասին է : մինչ յառաջաբանի մէջ խոստացուած է Գ. յեղանակ պատմել, պատմութիւնն ունի արտաքոյ եօթն յեղանակին ութնորդ : Այս մատենագրական խառնակութիւնները մէջ թիւր կասկածներէ եւ եղբակացութեան կ'առաջնորդէին եթէ նոյնանց ստեղծէինք մեզ համար շինութեան հինն, առանց պարզելու նոցա նշանակութիւնն եւ ծագումը : Բոլոր այլայլութիւններն երկու պատկերն են ներկայացընում : Առաջին տեսնում ենք, որ Ղևնդեանց մարտիրոսութեան նկարագիրը միանգամայն յարմար է Եղիշէի յիշատակարանին՝ պատմական շրջանի ամբողջութեան Տայեացքով : բաց ի բովանդակութիւնը լեզուն, ճաշակն եւ հոգեւորական ձեւերը նոյնութիւն են ներկայանում եւ այդպիսով Ը. յեղանակի եւ նախորդ պատմութեան համեմատութիւնից չի խնայուում թէ որեւէ օտար եւ անհարազատ մասն խառն է ամբողջութեան մէջ : Երկրորդ հակառակ վերոյիշեալի՝ երկուութիւն է ծածկուած մի կողմից յառաջաբանի եւ միւս կողմից Ը. յեղանակի մէջ, որի վերնագիրը այնքան բարձրաձայն յայտարարում է « արտաքոյ եթն յեղանակին ութնորդ : Այստեղ նկատուի, որ խնդիրը մեզ համար այն չէ թէ Ը. յեղանակն ու՞մ գործքն է — նրա՞ որ յառաջաբանի մէջ խոստումն է արել, թէ՛ մի երկրորդ հեղինակի. այլ այն է մեր ենթակալ հարցը՝ թէ ինչ բխտ է վիճակուել յիշատակարանին այն օրից, երբ կցուել է նրան « արտաքոյ եթն յեղանակին ութնորդ » խորագիրը : Մեր նախորդ նկատողութեան մէջ տեսնեք արդէն, որ յեղանակների յաջորդականութիւնն եւ նրանց շարժապիչ հատուածները պահպանուած են եւ անջրպետ չկայ յեղանակների միջավայրում, ուր որեւէ հատուածի կորուստը հարուստ էր լինէր նկատելարդ՝ ութնորդ յեղանակի կցմամբ ինչ պատկեր պէտք է ստանար եւ ստացաւ ամբողջ յիշատա-

կարանը, առանց նրա ամբողջութեան վնաս պատճառելու : Այն ծանօթութիւնները, որ մենք ունինք ձեռագիրների եւ մասին, որքան էլ հարուստ չլինեն, բաւական պարզում են այդ հարցը, չափ եւ առաջ Անձեւացեաց օրինակը չունի ոչ մէկ խառնակութիւն բացի Ը. յեղանակի ներկայում թիւնից : Թէ վերնագիրների խմբագրութիւնն է նոյն յառաջաբանի եւ պատմութեան մէջ, թէ Ը. յեղանակն է որիչ եւ թէ նրա վերնագիրն է պահուած իւր տեղում : Ըստ հնութեան՝ երկրորդ ձեռագիրը 1167 թուից նոյն է Անձեւացեաց օրինակի հետ. տարբեր չէ նաեւ առաջին հրատարակութիւնը 1764 թուին, որի ձեռագրի տարբեր մեղնից անյայտ է : Այնուհետեւ 12րդ դարից ղեւ ձեռագրերի մէջ յեղանակների թիւնն օթն է ցուցած. շատերը հինգերորդն հետ մի են ցուցել. իսկ ոմանք հինգերորդ յեղանակն են պահել եւ վեցերորդը բաց թողել, այս վերջին տեսակից են Էջմիածնի թիւ 1381 (ձեռ. ցուցակ) եւ Թիւ 1683 (1641՝ տպ. ցուցակ), առաջինն 1674 թուին է գրած, իսկ երկրորդն անթուական. սոցա մէջ արդի Ե. եւ Զ. յեղանակներն կազմում են սոսկ հինգերորդ, իսկ Զ. յեղանակ չկայ. այդպիսի բաժանումն անօթն է եղած նաեւ Վենետիկի գրչատնից 1828 թուի հրատարակիչներին Այս վերջին տեսակի յապաւումն ինքեան վկայ է, որ նախնեաց մտքում չէ եղած յապաւմամբ որեւէ յեղանակի կորուստն նշանակել, այլ սոսկ մի յեղանակ պակաս ցոյց տալ, լինի Ե. պակասած եւ Զ. պահուած, թէ ընդհակառակն Զ. պակասած եւ Ե. պահուած : Այդպէս՝ Էջմիածնի մի ուրիշ ձեռագիրը Թիւ 1685 (1643՝ տպ. ցուցակ) ունի միմայն եթն յեղանակ. այսինքն՝ Ե. եւ Զ. յեղանակներն միացմամբ հինգերորդ դասերը յետոյ, այնտեղ « երկարունի իրացն խաղութեան », վեցերորդ է կոչուած, իսկ ութնորդ յեղանակն վերջին տեղն է բռնում 7րդ կոչմամբ. այս ձեռագիրն հնութեամբ երկրորդն է մատենագրանում, գրուած է Փրիշի 1207 թուին երկավագիր եւ բոլորգիր խառն գրչութեամբ (ըստ տպ. ցուցակի՝ նսոր գրչութիւն, որ սխալ է), եւ ինտմուած է նորոգութեամբ Զաքարիա Մարկաւազ պատմագրի : Այս վերջին ձեռագիրն վկայում է թէ նախնիք որքան վաղ մտածել են հաշտեցնել ութնորդ յեղանակի ներկայութիւնն եւ Եղիշէի յառաջաբանն. եւ կ'երեւի թէ այդ փորձն խոտելի է ձանաչուած, որովհետեւ մատենագրանում այն փորձին հե-

տեւած ձեռագիր չկայ, իսկ այլուր ինձ ծանօթ չէ այդպիսին։

Ամիոսիւթով վերոյիշեալը՝ տեսնում ենք, որ Եղիշէի ձեռագիրների ընդհանուր նկարագիրը շատ ծանօթութիւններ է ընձեռում նկատուած խառնակութիւնների առաջ գայու եւ շոցա առաջագրած հետեւանքների մասին. այն ծանօթութիւններից արդէն իսկ նշմարելի է, որ խառնակութիւնների պատճառն եւ նպատակն այն ութերորդ յեղանակի ներկայութիւնն է եղած։ Մեր ցանկութիւնն այսուհետեւ կը լինի սպասել լսել ձևադրական կենդաններից հետաքրքիր բանասէրների ձայնը ներկայ հարցի մասին. այդպիսի ընդարձակ ձեռագրական ծանօթութիւնը միայն միջոց կը տայ վճռականապէս սպառուած համարել որեւէ ինքզին լղիշէի յիշատակարանի մասին ընդհանրապէս։

Գ.

Նախնեաց պատմական երկերի արտաքին պատկերը միակերպ է. սովորական ընդունուած ձևով, ամբողջ աշխատութիւնն. երեք մասի է արոհչուում եւ ամեն մի մասը՝ գլուխներ։ Երբեմն այն մասերը սոսի առաջին, երկրորդ եւ երրորդ պատմութիւն են կոչուում, երբեմն դրուակ, երբեմն գպուութիւն, երբեմն գիրք, եւ երբեմն մասն։ Մատենագրական ինքզին է քննել տեսնել արդեօք ընդգրկներն այդ իսկ կազմութիւնն ունէին, թէ յետոյ դարերի ընթացում առաջ եկան այն բաժանմունքները, երբ գրականութիւնը հարստացաւ եւ նիւթերն օրակաւորելու կարիք զգացուեց։ Այս վերջինս անտարբեր ինքզին է ներկայ էլում, այստեղ լղիշէի յիշա-

տակարանի արդի կազմութիւնը պիտի գիտնեք, որ բացառութիւն է նախնեաց երկերի շարքի մէջ. նա ըստ յառաջաբանի եօթն յեղանակի է արոհչուած, մի քանակութիւն եւ կոչումն, որոնք չեն հանդիպում այլուր մեր պատմիչների մաս, Ինչ հանգամանքի արդիւնք է այս երեւոյթը — այս հարցն է, որի լուծումը կ'առաջարկենք այստեղ։

Նախնեաց համարուածանդական ձեռնարկը զիտոյցի գիրքն է եղած, որ այդ իսկ նպատակով շարադրուած է եւ մի հեղինակաւոր պատմագրի անունից յանձնարարուած։ Մենք բանասէրների ուշադրութիւնը հրաւիրում ենք այդ գրքի "Սահման Ներքողի" կոչուած հատուածի վրա, որ այսպէս է հրահանգում նորոտներին — "Ի գովելն պարտ եւ արժան է նախաշաւիղ ատենել ըստ տեղոյ եւ պատճառին։ Ապա զնել զազգն եւ զնոյն բաժանել ի գաւառս եւ ի նախածնողս եւ ի հարս։ Ապա զնոտնզն եւ բաժանել յաւառն եւ ի վարժս եւ յարէնս։ Եւ ապա վեժ գլուխ ներքողինն զնել զգործսն եւ զնոյն բաժանել յանձն եւ ի մարմին եւ ի գիպուածս. զանձն յիմաստութիւն եւ յողախոհութիւն, յարութիւն եւ յարդարութիւն. զմարմին ի գեղեցկութիւն եւ ի զօրութիւն եւ յերագութիւն. զգիպուածս՝ ի ճոխութիւն եւ յընչեղութիւն եւ ի սիրելիս։ Ի վերայ այսոցն զնել զբազմապատկութիւնն յարարութեամբ ներքողեցումն վեժագոյնսն ընդունել։ Եւ ապա զի վերայ բանին՝ ի կատարման ըստ պատճառի։

Համաձայն այս կանոնների ներքողը պէտք է ունենար 6 գլխաւոր մասն. 1. Նախաշաւիղ, 2. Ազգն, 3. Մեռնդն, 4. Գործքն, 5. Բաղդաստութիւն, 6. Կատարումն։ Այս մասերից ոմանք ունին զանազան ստորաբաժանումներ. օրինակ՝ երկրորդ մասն ունի գաւառ, նախածնող եւ հարք. երրորդ մասն ունի ուսումն, վարժք եւ օրէնք, չորրորդ մասն ունի անձն, մարմին եւ գիպուած. իսկ այս վերջիններս ունին իրենց ստորաբաժանումներն — անձն ունի իմաստութիւն, ողախոհութիւն, արութիւն եւ արդարութիւն, մարմին ունի գեղեցկութիւն, զօրութիւն եւ երագութիւն, գիպուած ունի ճոխութիւն, ընչեղութիւն եւ սիրելիք։ Այսպիսով հանգամանքէն ստորագրութիւնը նրա համար էր, որ ամեն դր ամէն տեսակ ներքողելի նիւթերի համար արդէն պատրաստի հարցեր գտնել ձեռնարկի մէջ. իսկ հարցերից նոքա որոնք նիւթին աշարիր կը ճանաչուէին, կը բացակայէին ներքողի մէջ, որ եւ նկատելի է այն հինք ներքող-

1. Չգիտենք կան արդեօք յապաւելու եւ միացման պէն. այլ ձեռք ձեռագիրների մէջ. կը յիշեմք միայն մեր նախնին ուսուցիչ Գ. Եղիշէ Մատաթեանի մեջ գրած նամակից այս առիթն. "որքան յիշում եմ այդ միացած յեղանակները տպագրի լըբըրք եւ հնիքները յեղանակներն էին, մինչդեռ. իմ սեռած ձեռագրում լըբըրք կոչում յեղանակից յետոյ գալու էր վիշտըրքը։ Այստեղ իտեքը իշխմանն ձեռագրերի մասին է, եւ այնու ամենայնիւ. պէտք է նկատենք, որ մեզ այդպիսի մի ձեռագիր չէ պատահած այն մասնագրարանում. պղծպիսի միացում միւլեւ. իսկ անհատական է թուում մեզ Գ. եւ Ե. յեղանակների նիւթերը իւրտ տարբեր են ըստ էութեան. եւ ահա՛ստարակ Ա. Բ. Գ. Դ. Եւ Զ. յեղանակներից իւրաքանչիւր յաշորդը՝ նախորդի հետ միացնելու համար հաջիւ թէ փորձ լինի եղած նախնեաց յիշումս։ Միայն Ե. եւ Զ. յեղանակներն են, որոց մէջ նիւթը մեռնույն պատրուածն է. նոցա վերնագիրները — "յարձաւ. ձն արեւելիայցն, եւ "ընդգէմ" կըլ. Հայոց պատերազմաւ թագաւորին պարտից, — անխոր ինքզին ինքուր համար էլ կարելի է գործածել, առանց իմաստի մէջ որեւէ սղուռն կամ կրատուռն առաջնեցնել։

ների վրա, որոնք հետեւում են կանոններին. նորա հաւասար տրոհումներ չունին, մէկն ունի 23, մէկն 21, մէկն 19 եւ երկուսն 17 մասն — մինչ ներքոյի ընդհանուր կանոնների մէջ յիշուած են 19 հարցեր միայն¹։

Պիտոյից գրքի մի ուրիշ մասի մէջ հրահանգւում է թէ պարսաւի մէջ կարելի է գտնվել, պարսաւելի նիւթն աւելի մեծելի կացուցանելու համար եւ ընդհանրապէս՝ ներքոյի մէջ եւս պարսաւել կարելի էր. այդ էլ նկատելի է այն հինգ ներքոյիների մէջ, ուր առաքինութեան հալաւապն շեշտուած է ներքոյիների մեծութիւնն աւելի պատկերաւոր կացուցանելու համար։

Եւնք այս խնդրի վրա կանգ առնք այսքան երկար, որովհետեւ Եղիշէի յիշատակարանի ինչ ինչ առանձնայատկութիւններն եւ ներքոյի կանոններն եւ օրինակներն ուղղակի մէկը միւսին ծածկում են. ուստի այստեղ կը յիշենք այն յիշատակարանի աւելի ընդնող երեւոյթները համեմատաբար քայլով ներքոյի կանոնների հետ։

Ուրիշ անգամ Հակոբի էջերում առիթ ենք ունեցել հանգամանորէն յիշելու այն բազմաթիւ աւելորդաբանութիւնները, գովեստներն ու յորդորները, որոնք շնորհիւ Եղիշէի յիշատակարանից յետ է ձեռում Ղազարի կարգաբանեալ պատմութիւնից ըստ պատմական արժանեաց. այդ պատճառով այդ երկու պատմիչները բազմաթիւ տարբեր էջեր ունին միեւնոյն նիւթի եւ պատմական անձնաւորութեան մասին. Եղիշէն մեծացրել է ուխտապահների ոյժը, սքողել է ղաւաակի եւ Վարդանի բուն յարաբերութիւնը. նա ղաւակին մէկ բարձրացրել է՝ Հայաստանը, Փգր Մարտի, Պարսից գուռն եւ Կովկասեան ցեղերը ընդ իւր կոչ շրջելու չափ ազդեցիկ ու զորարար վիճակով, մէկ էլ կրկին նուստա, անգոր, անպաշտպան, միամտ Մարմաւել նրա մասին։ Այս բոլորն եւ առհասարակ ղազարի ու Եղիշէի համեմատութիւնից առաջացած բոլոր անմեկնելի երեւոյթները մեկնելի են դառնում, երբ Եղիշէի յիշատակարանին նայում ենք ոչ իբրեւ պատմութեան, այլ սոսկ ներքոյի. ընդարձակ, սահուն ոճով, ընդհանուր մասշնիւ ծաշակով մի ներքոյի՝ որի նպատակն եղած է ազգային կրօնական

շարժման յիշատակով վառել ու քաջալերել սերունդներին։

Ղաւակի կուսակցութեան պատմութիւնը Գ. յեղանակի մէջ եւ Հայոց երկարաբան նամակն առ արքայն եւ թէ մէկն եւ թէ միւսն իսկապէս կրկնութիւն են այն բազմաթիւ նշոյնիմաստ հատուածների, որոնք բոլոր յեղանակների մէջ ցրուած կան. բայց նոքա, ամբողջուած եւ ի մի խմբուած Գ. եւ Գ. յեղանակների մէջ մէկն իբրեւ «Պարսաւ» եւ միւսն իբրեւ «Եղն» ծառայում են բուն ներքոյի նպատակին. հետեւորական մի պահանջ է իւրաքանչիւր ճառի մէջ պարսաւելի նիւթին ձգած հատուկտոր ակնարկ. ներից յետոյ, յատուկ այդ նիւթն առանձին առած շեշտել ու հրէշային, զղուշելի կացուցանել։ Ուրեմն էլ ինչ աւելի յարմարագոյն առիթ. Ղաւակին բացայայտ ճակատամարտի կուսակցներից չէր, կղերին չէր քաջալերում. ուրեմն նա պէտք է ներկայանար մի կրօնական ազգային շարժման ներքոյի մէջ այն սեւ պատկերը, որի համեմատութիւնից պիտի երեւար մեկն մի անձի սպիտակ պատկերն։

Ներքոյի կանոններից երկու վերնագիր անցել են բառացի կերպով Եղիշէի յիշատակարանին. «Ներքոյի էլ, կարդում ենք Պիտոյից գրքի մէջ, զգեմ, եւ յէր» եւ գիւսանակ, եւ զտեղին եւ զանբան կենդանի եւ զծառսն։ Եղիշէի առաջին յեղանակի վերնագիրն է «Ժուսանակ» (1823 թ. հրատ. «Ժամանակ»)՝ ուր պատմուած է քրիստոնէութեան եւ զրադաշտեան կրօնի ընդհարման պատմութիւնը մինչեւ Վարդանանց օրերը։ Երկրորդ յեղանակի վերնագիրն է յերօց պատահումն յիշեանէն արեւելիցն, ուր պատմուած է Վարդանանց պատեւրագմի նախօրեակի դէպքերը — Պարսից բացարձակ պահանջն եւ Հայոց հաւանութիւնը։

Եղիշէի յեղանակների յարդրական կարգն եւ նոցա մէջ նիւթի դասաւորութիւնը նոյն է ինչ որ ներքոյի կանոնների մէջ է։ Առաջին յեղանակը «Ժամանակն» վերնագրով մի սնախաշաւիղ է, որով հեղինակը ծանօթացնում է ներքոյի նիւթի — Հայոց կրօնական շարժման հետ։ Բ. յեղանակը («Գուսաւ, նախածնող, հարը») պատմում է Հայոց շարժման ծնողի մասին. հեղինակը Թաղկերտին ու մոզերին է համարում Հայոց շարժման ծնողը. իսկ այն միջա-

¹ Նկատենք, որ ներքոյի բաժանութեան երբեք մի առանձին իրարից անկալ բաժիններ չեն, այլ ունին ներքին կապ եւ նոցա փոխարք յարաբերութիւնն անբան սերտ է, որ չստ վիճելի է ներկայանում մասերի բաժանելու ինդ ինդ՝ օրինակ Նորնիացու. Հակոբի մասին եւ ուրիշ ընդհանրակ ներքոյիների համար ընդհանրապէս։

¹ «Ժամանակն», եւ նաեւ Էջմիածնի տնտեսների մէջ — 1) 1887 (Պարսիկեան ցուցակ 1845), 2) անտիպ ցուցակի 2463 թիւն (այլ ցուցակ) եւ 3) 1883 (այլ ցուցակ) Կոստանթնուպոլիսի։

վայրն ուր ծնունց շարժումը նշանակուած ե Պարսից կրակատունն եւ Հայոց եկեղեցին, ամենեւին տեղ չյատկացնելով քաղաքական դաւրեւոր նկատուածներին, որ Պարսիկներն ու Հայերն ունէին գարեբից ի վեր: "Եղբ", այդ մասի մէջ պատմում ե շարժման բուն կրօնական պատկերն եւ ծնունդը: Այնուհետեւ Գ. Գ. եւ Ե. յեղանակներն ("սնունդն եւ գործքն,") պատմում են շարժման աղբիւրը, Հայոց միաբանական ուխտն եւ եկեղեցականների գործունէութիւնը. այդ մասի մէջ ե նաեւ "Պարսաւը", որով ներքողելն առաւել նշանաւոր օրինակելի են համակրելն ե պատկերացրած: Զ. յեղանակն "ընդդիմանալն" Հայոց պատերազմաւ թագաւորի Պարսից ("Բաղդատութիւն,") ներկայացնում ե Հայոց եւ Պարսից երկու միջակից օյտերն եւ հանդիպակաց ե դնում նոցա իրենց քանակով, որակով, յօրինմամբ ե ոգեւորութեան աղբիւրով: Բաղդատութեան աւելի յարմար օրինակ չէ կարելի որոնել քան Զ. յեղանակի վերջին տողերը, ուր Հայոց եւ Պարսից կրօնական անհամեմատ չափը Միհրնիւրսեհի մօտասանելութեան նիւթ ե ներկայացրած, որ խուսափելով երկարելուց մենք չենք ընդօրինակում այստեղ: Ի վերջոյ Ե. յեղանակի մէջ պատմուած ե կռիւ անմիջական հետեւանքը, ուր Վասակի զատապարտութեան նկարագրով Հայոց շարժումը դադարած ե ցուցած. յստաճարակի մէջ խուսացեալ վերջին յեղանակն ե այդ, որ եւ իւր բովանդակութեամբ համաձայնում ե ներքողի վերջին մասին "կատարում", այդ կատարումը դնելուց յետոյ յեղանակը վերջանում ե այս. խաբարեւ "Գրեցաւ իշխատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա, զի ամենայն որ զայս լուեալ գիտացէ, նշովս ի հետ արկցէ եւ մի լեցի ցանկացող գործող նորա":

Թէ երբ ե գրուած այս նշանաւոր ներքողը, որ վիպականական ոգով եւ գեղարուեստական յօրինմամբ այնքան յարողութիւն ե ունեցել,

եւս միակ անդամն ե, որ եղիշէի յեղանակների ընթերցանութեան միջոցն մտքը ընդհատուած ե զգում Հայաստան ի հարկն ը: յեղանակը: Աստղին ետին յեղանակներն այնքան անկասկածի զգաւոր ունի հանդիպման տեղերում, որ բոլորը մի ընտով կարգացում են մինչեւ վերջ. նոցանից իւրաքանչիւրն ունի իւր յատուկ նշանակութիւնն ամբողջութեան համար եւ այդ պատճառով արդի յեղանակներից որեւէ մէկը չուրս հանելով, մենք թուալարած իր լինելը ամբողջից բխող ապարտութիւնը. այդ բոլոր առանձնայատկութիւնները գեղարուեստորէն ասեղեքագործած բոլոր ներքողները մէջ նկատելի են, իբրեւ հակադրական արեւմտի անպայման պահանջները:

Ինչ առիթով ե գրուած եւ վանական որ դպրոցում — այդ հարցերը յետաձգում ենք մի ուրիշ առիթի: ԳՐ. ԶԵՐ-ՊՇՂՈՍԵՆԻ



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԲԻԹՅՈՎ ԳՈՎՏ. ՆԵՇՆՊԵՏ ԲԵՐԽԵՆՆԵՆ

(Հարստ-Իր-Բի-Են)

Սահմանագրութեան հիմնական սկզբունքները բոլորովին անխախտ պահուած, փորձառութեան ցուցուցած կարգ մը սրբագրութիւններով վերստին շարագրուած կանոնագիրք մըն էր այն, շատ քիչ տարբեր արդէն եղածէն. բայց հիւսնային էր, անոր ճեղքեկագիրքը Ռուսինեան ինքն էր խմբագրած եւ որուն սա հետեւեալ մասը կաւրեւոր կը համարիմ գրել հաս, իբր անկողն յայտարարութիւն Ռուսինեանի ազգասիրական վառ զգացումներուն:

"Արեքսնիւ Գանձախուրդ" իւր արտաստութեանց ընթացքին մէջ չէր կրնար իրեն ուրիշ յեղանակ ընտրել, եթէ ոչ ընկերական ամենայն զաւայթ այն տեղեկական սկզբունքը՝ իտաւածի առ զգրի, ընդ որ յեղեալ են Սահմանագրութեան պատահողանքը, չէր կրնար ուրիշ առաւել նոր բանել իրեն եթէ ոչ այն ոգին որ ի սկզբանէ մինչեւ ցարդ տիրած ե ու կը տիրէ մեր ազգային աստիճանագրութեանց մէջ՝ որ երեւոյթանալան գրութեան ոգին ե, որ հաստատութիւն կը հաստատեն ամեն ազգայնացի մէջ, եւ օրինաւորութիւն կը պատահիր ազգային ամեն անդրեւորութեանց մէջ:

Ինչ ե օրինաւորութիւնը, եթէ ոչ հաստատալէն առնված ու ազատալէն բացալարուած կարելը բազմութեան, այսինքն մեծադոյն մասին: Այս կարելը կրնայ սխալել սխալակամութիւնն զերծ չէ, բայց օրինաւոր ե, եւ բնավաճած ալ օրինաւորութիւն ե:

Օրինաւորութեան սկզբը Հայաստանեայց Եկեղեցւոյ աւանդական սկիզբներէն ե իբրեւ յայն բաւով յայն Աստուծոյ: Արդարեւ մը Հայաստան կամ մը եպիսկոպոս Հայ Եկեղեցւոյ ժողովարար մը նեւաւարութեան կը համարուի առանց ժողովարարին հաստատութիւնն առնելու: Անաւարդելու այն արժանաւորութեանը վրայ կըր անորան բառը հնչիլ ժողովարարին մէջն, հարատիւ ըլլայ հնչող բերանը թէ աղքատ, աստիճանաւոր թէ անաստիճան, իշխան թէ հովիւ, հոգ չէ, զորութիւնը նոյն ե. իսկից սրբազանքս անը գողցողովով եւս իր քաշիլ իսկ եթէ համբարակի նեւաւարութեան ընդգծմ վիպարութեան ժողովրդեան, ապօրինաւոր համարութեւ ե նոյն նեւաւարութիւնն Եկեղեցւոյ առնելու:

Այս սկզբան զորութեւ ե հաստատութեան եւ օրինաւորութեան վարչապետութիւնը Հայ Եկեղեցւոյ մէջ, եւ սկսպէս ժողովարարին ե ի սկզբանէ անտի մեր եկեղեցական վարչութիւնն եւ հետեւաւոր եկեղեցականն կարեւոր աշխարհական քործող ղեկավարութիւնը: Այս մասը միայն այս սկզբանը գործանութիւնը կարգի կանոնի ապա առնելու, որն ու Սահմանագրութեան գործն ե, Սահմանագրութեան որ ազգալէն այս հարաւորութիւնն են: Եւ որ ազգալէն այս ղեկաւոր նպատակն պիտի նաւայէ: